ARM-2000-L-70277

Armenia TRADUCTION

1/3/2011

ARMENIA

# Law On Trade Unions

Adopted on 5 December 2000

## Chapter 1

## General Provisions

Article 1. Subject of the Law

The present law regulates the procedure of establishing trade unions, principles of their activities and relations with state bodies, local self-governing bodies, legal and physical persons, as well as regulates relations resulting from protection of rights and interests of trade unions and their participants (members).

The law applies to trade unions operating in the Republic of Armenia.

Article 2. Main concepts used in the law

In the present law the following main concepts are used.

Trade Union- trade union or union of trade unions

Trade Union Organization- public union which unites workers on a voluntary basis to protect and represent their labour and related social and other rights and interests.

Union of Trade Union- union of legal persons which unites trade unions and (or) unions of trade union organizations.

Republican Sectoral Union of Trade Unions – union of legal persons which unites trade unions organizations operating in a given professional sector or similar sectors and (or) more than half of union of trade unions organizations in which a maximum numbers of employees of the given sector are member.

Republican Union of Trade Union Organization- union of legal persons which unites more than half of the republican sectoral unions of trade unions and to which the majority of members of trade unions operating in the Republic are number.

Employer- institution conducing activities in compliance with the legislation of the Republic of Armenia, legal person or any other organization independent from the form of ownership, as well as physical person, using in manner provided by the law, paid labour.

Employee- physical person having legal right to work which on basis of employment contract conducts work for the employer.

Participant (member) of the Trade Union- is a person who on a voluntary basis and based on the statute of the union became participant (member) to a trade union.

Article 3

Main principles of activity of the trade union

The main principles of activity of trade union are:

a) Independence from state and local self governing bodies, employers, political, social and other organizations;

b) voluntarily participation (membership) to trade unions;

c) legal equality of trade unions

d) prevention of limitation of worker's rights due to the fact of his/her participation( membership) to trade union.

## Chapter 2

Establishment of Trade Union

Article 4. Procedure of Establishment of the Trade Union Organization

The trade union organization shall be founded based on the decision of the founding assembly (congress, conference) convened on its founders' initiative (no less than 3 employees).

The funding assembly adopts organization's statute, elects governing and supervising bodies.

Article 5. Establishment of the Union of Trade Union Organizations

Two and more trade unions and/or unions of trade union organizations based on decision of their assembly representatives (congress, conference) can found one union of trade union organizations adopting its statute and electing governing and supervising bodies.

Republican Union of Trade Union Organizations and Republican Sectoral Unions shall have the right to use in their name the denomination "the Republic of Armenia" or its abbreviation.

Article 6. Participants (members) of Trade Union Organization

Participants (members) of trade union organization can be persons working within or outside of the territory of the Republic of Armenia, including foreign citizens and persons without citizenship.

The employee can be a participant (member) of more than one organization, if it does not contradict with their statute.

The procedure of becoming participant (member) of trade union organization shall be defined by the statute of that organization.

Servants of armed forces and law enforcement bodies of the Republic of Armenia can not be a participants (members) of trade union organization.

The employer can not be elected to the governing body of the trade union organization where the employee of the given employer is a participant (or member).

Article 7. Participants (members) of Union of Trade Union Organizations

Participants (members) of union of trade union organization can be trade union organizations and/or unions of trade union organizations.

Trade union organization and union of trade union organization can be a participant (member) of a union of trade union organizations.

Participation (membership) to trade union shall be regulated by its statute.

Article 8. Supreme Body of Trade Union

The Supreme body of trade union is its assembly (congress, conference) which shall be convened in accordance with the procedure and terms set in its statute, no less than once per 5 years.

The Supreme body of trade union shall have the right to final settlement of any issues regarding its activity. It has an exclusive competence to:

a) Approve and amend the statute of the trade union;

b) Elect control and supervision bodies of the trade union;

c) Make decisions on reorganization and liquidation of the trade union.

Article 9. Statute of the Trade Union

The Statute shall include:

a) Name of the trade union which shall accordingly include the words "trade union organization" and "union of trade union organizations";

b) Subject and goals of activities ;

c) Structure, procedure of constitution and activities of control and supervision bodies, their functions;

d) Procedure to become a participant (member) and cease to participate (cease to be member)

e) Rights and duties of participants (members)

f) Place of residence (address)

g) Procedure of reorganization and liquidation

h) Procedure to make amendments and supplements in the statute

i) Entry fee, membership fee amount, payment order and other sources to acquire property.

Article 10. Legal Capacity of the Trade Union

The legal capacity of the trade union shall begin from the moment of its state registration and cease from the moment when record on termination of its liquidation is made in the state registry for legal persons.

The registration and refusal of the registration of the trade union shall be implemented in accordance with the procedure provided by law.

Article 11. Reorganization and Liquidation of Trade Union

Reorganization (merger, affiliation, division, separation) of trade union shall be implemented based on the Supreme body decision, in accordance with the procedure of its state and with law.

Reorganization of trade union shall not be allowed.

Liquidation of trade union shall be carried out in cases and a law and the trade union statute.

**Chapter 3**

ACTIVITIES OF TRADE UNION

Article 12. Legal Basis for Trade Union Activities

The Trade Union shall carry out its activities in compliance with the Legislation of the Republic of Armenia and statute of the Trade Union.

Article 13. Independence of Trade Union

Trade unions shall be independent from state bodies, local self-governing bodies, employers and other organizations and parties and shall not be accountable to them or subject to their control, except the cases provided by law.

State bodies, local self-governing bodies, employers, other organizations and individuals shall not be allowed to impede or interfere in implementation of rights defined by trade union, except cases provided law.

Article 14. Cooperation of Trade Unions

Trade Union in compliance with the Legislation of the Republic of Armenia and the statute of trade union shall have the right to cooperate with international and other states' trade unions and other public associations, as well as to enter into (become a member of) international and other states' trade unions.

**Chapter** 4

OBJECTIVES, RIGHTS, DUTIES AND RESPONSIBILITIES OF TRADE UNION

Article 15. Objectives of Trade Union

Objectives of trade union shall be to:

a) Represent and protect the labour and other related social rights and interests of trade union participant (member) against the employer and/or third person;

b) Upon employer's invitation take part in drafting of production plans and their implementation.

c) Present suggestions to the employer to improve labour and recreation conditions, to impliment new technology, reduce handwork, revise production norms, revision of wages and the procedure for it.

d) Cooperate with the employer in the issues of giving awards and encourage the participant (member) of trade union.

e) Upon employer's request discuss issues related to a participant (member) having breached labour discipline.

Article 16. Right of Trade Union to Conclude Collective Agreement (Contract)

Trade Union, on behalf of its governing body or representative shall have the right to sign (re-sign) collective contract (agreement) with the employer.

The Employer shall have the duty to sign (re-sign) collective contract (agreement) with the trade union uniting its employees.

The collective contract (agreement) shall be concluded in accordance with the procedure provided by the legislation of the Republic of Armenia.

The Republican Union of Trade Union Organizations can negotiate and conclude agreement with the Government of the Republic of Armenia; Republican Sectoral Union of Trade Unions can bargain and conclude agreement with other bodies of state authorities.

Article 17. Rights of Trade Union Related to Labour Conditions

In accordance with the procedure provided by the Legislation of the Republic of Armenia Trade Union representatives shall have the right to visit workplaces where the participants (members) of given trade union are employed with the aim to examine labour conditions.

In the event of discovery of situation at workplace related to labour conditions posing a threat to life and health of the employee Trade Union shall have the right via a solicitation to require to take measures to eliminate the threat or suspend of work at workplace. In response to the solicitation employer has the duty to inform the trade union about the measures taken within the terms defined by the Legislation of the Republic of Armenia.

Article 18. Right of Trade Unions to Obtain and Distribute Information

Trade Union in order to implement and statutory aims and in compliance with the legislation shall have the right to obtain information from state bodies, local self-governing bodies, employers which is not considered as banking, commercial or professional secret-

Trade Union shall have the right to cover its activities through mass media and for that aim may also have media service as provided by law.

Article 19. Right of Trade Union to Solicitation

Trade Union, as provided by law, shall have right to present a solicitation to state bodies, local self-governing bodies, employer or other persons with the aim to protect trade union participant (member) rights and interests, as well as to file a petition against their action (unemployment).

Article 20. Right of Trade Union to Strikes and Other Mass Actions

Trade Union shall have the right, in compliance with the law, to organize and conduct peaceful and non-armed gatherings, rallies, street marches, demonstration, strikes, other mass activities, to carry out negotiation related to these issues with state bodies, local self-governing bodies, employers and other organizations, their officials.

Article 21. Right of Trade Union to Participate in Drafting of Legislation

Trade Union shall have the right to submit suggestions to the Government of the Republic of Armenia and to the deputies of the National Assembly of the Republic of Armenia aiming at adopting legal-normative acts to protect labour and social rights of participants (members) of trade unions and to make amendments and supplements in these acts.

Article 22. Liability of Trade Union

In the event of non-fulfillment of its collective or other obligations, as well as for organization and carrying out of illegal strikes and other actions, trade union shall be liable in accordance with provisions of the legislation of the Republic of Armenia.

**Chapter** 5

GUARANTEES TO AND SUPERVISION OF TRADE UNION ACTIVITIES

Article 23. Guarantees to Trade Union participants' (members) activities

State bodies, local self-governing bodies, employers and other organizations, their officials, as well as other persons in compliance with the Legislation of the Republic of Armenia shall be obliged not to violate rights of trade union and its participants (members)..

In the event of violation of rights of Trade Union or its representative or impediment to organization's statutory activity, persecution of trade union leaders and representatives result in a liability as provided legislation of the Republic of Armenia.

On the initiative of the employer, including in case termination of employee's employment contract during staff reduction as well as transfer of employee to another position, relations resulting from application of disciplinary penalties to employee, collective and individuals disputes) the participation of trade union is regulated by labour legislation.

Article 24. Creation of Conditions for Trade Union Activities

The employer, in compliance with collective contract (agreement), shall provide necessary conditions to trade union aiming at organizing and carrying out activities provided in the trade union statute.

In case of trade union employee addressing the demand the employer shall organize the collecting and distributing of trade union membership fees and that in conformity with the procedure and terms defined by the collective contract or agreement.

Article 25. Guarantees to Persons Elected to Governing Bodies of Trade Union

Issues related to the remuneration of members of elected bodies of trade union during their absence from work due to performance of public duties and participating to trade union events are regulated by legislation of the Republic of Armenia and by collective contract (agreement).

Other guarantees can be provided by collective contract (agreement) to the persons elected to trade union bodies.

Article 26. Supervision of Trade Union Activities

Supervision over trade union activities shall be carried out in compliance with law and trade union statute.

Trade unions' supervision over the compliance with the present law shall be carried out by the Ministry of Justice of the Republic of Armenia.

**Charter 6**

TRADE UNION PROPERTY AND ITS MANAGEMENT

Article 27. Trade Union's Property

Trade Union's property is constituted from entry fees, membership fees, voluntary investments, donations and other sources not prohibited by the Law.

The employer, in compliance with the collective contract (agreement), shall provide financial means and other property to Trade Union in order to improve work and recreation conditions for employees, as well as to organize activities targeting health protection.

The State shall guarantee protection and immunity of Trade Union's rights to property.

Article 28. Property Management of Trade Unions

Trade union possesses uses and manages its property in compliance with procedure the legislation of the Republic of Armenia and Trade Union's statute.

Trade Union after termination of each calendar year, within each trimester period shall publish the annual report on use of its property.

## Chapter 7

## CONCLUDING PROVISIONS

Article 29. ENTRY OF THE LAW INTO FORCE

The present law shall enter into force from the day of its official promulgation.

President of the Republic of Armenia

R. Kocharyan

Yerevan

31 December 2000

ՀՕ-135

| | | | |
|---|---|---|---|
| Համարը | ՀՕ-135 | Տեսակը | Մայր |
| Տիպը | Օրենք | Կարգավիճակը | Գործում է |
| Սկզբնաղբյուրը | ՀՀՊՏ 2001.01.15/1(133) Հոդ.1 | Ընդունման վայրը | Երևան |
| Ընդունող մարմինը | ՀՀ Ազգային ժողով | Ընդունման ամսաթիվը | 05.12.2000 |
| Ստորագրող մարմինը | ՀՀ Նախագահ | Ստորագրման ամսաթիվը | 31.12.2000 |
| Վավերացնող մարմինը | | Վավերացման ամսաթիվը | |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 15.01.2001 | Ուժը կորցնելու ամսաթիվը | |

| Ենթարկվել է փոփոխության հետևյալ փաստաթղթերի կողմից՝ | Յուրաքանչյուր փոփոխությանը համապատասխանող ինկորպորացիան՝ |
|---|---|
| ԱԺ,24.10.2006,ՀՕ-171-Ն | ԱԺ,05.12.2000,ՀՕ-135 |

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2000 թվականի դեկտեմբերի 5-ին

## ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ 1

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Սույն օրենքը սահմանում է արհեստակցական միությունների հիմնադրման կարգը, նրանց գործունեության սկզբունքները և հարաբերությունները պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, ինչպես նաև կարգավորում է արհեստակցական միությունների և նրանց մասնակիցների (անդամների) իրավունքների ու շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում գործող արհեստակցական միությունների վրա:

## Հոդված 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

*արհեստակցական միություն*՝ արհեստակցական կազմակերպություն կամ արհեստակցական կազմակերպությունների միություն.

*արհեստակցական կազմակերպություն*՝ հասարակական միավորում, որը կամավորության սկզբունքով միավորում է աշխատողներին՝ նրանց աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերը և իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու համար.

*արհեստակցական կազմակերպությունների միություն*՝ իրավաբանական անձանց միություն, որը միավորում է արհեստակցական կազմակերպություններին և (կամ) արհեստակցական կազմակերպությունների միություններին.

*արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն*՝ իրավաբանական անձանց միություն, որը միավորում է մասնագիտական գործունեության որոշակի ոլորտում կամ հարակից ոլորտներում գործող արհեստակցական կազմակերպությունների և (կամ) արհեստակցական կազմակերպությունների միությունների կեսից ավելին, որոնց անդամագրված են տվյալ ոլորտի առավելագույն թվով աշխատողներ.

*արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միություն*՝ իրավաբանական անձանց միություն, որը միավորում է արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունների կեսից ավելին, որոնց անդամագրված են հանրապետությունում գործող արհեստակցական միությունների առավելագույն թվով անդամներ.

*գործատու*՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գործունեություն իրականացնող հիմնարկ, իրավաբանական անձ կամ որևէ այլ կազմակերպություն՝ անկախ սեփականության ձևից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով վարձու աշխատանք օգտագործող ֆիզիկական անձ.

*աշխատող*՝ օրենքով աշխատելու իրավունք ունեցող ֆիզիկական անձ, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանք է կատարում գործատուի մոտ.

*արհեստակցական միության մասնակից (անդամ)*՝ անձ, որը կամավորության սկզբունքով մասնակից է դարձել (անդամագրվել է) արհեստակցական միությանը՝ վերջինիս կանոնադրության համաձայն:

## Հոդված 3. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Արհեստակցական միության գործունեության հիմնական սկզբունքներն

են՝

ա) պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպություններից անկախությունը.

բ) արհեստակցական միություններին մասնակցելու (անդամակցելու) կամավորությունը.

գ) արհեստակցական միությունների իրավահավասարությունը.

դ) աշխատողի իրավունքների սահմանափակում թույլ չտալը՝ կապված նրա՝ արհեստակցական միության մասնակից (անդամ) լինելու հանգամանքի հետ:

## Գ Լ ՈՒ Խ 2

## *ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ*

### Հոդված 4. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվում է նրա հիմնադիրների (առնվազն 3 աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ:

Հիմնադիր ժողովը հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

### Հոդված 5. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Երկու և ավելի արհեստակցական կազմակերպություններ և (կամ) արհեստակցական կազմակերպությունների միություններ իրենց ներկայացուցիչների ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ կարող են հիմնադրել արհեստակցական կազմակերպությունների մեկ միություն՝ հաստատելով նրա կանոնադրությունն ու ընտրելով ղեկավար ու վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Արհեստակցական կազմակերպությունների հանրապետական և ճյուղային հանրապետական միություններն իրավունք ունեն իրենց անվանման մեջ օգտագործել «Հայաստանի Հանրապետություն» անվանումը կամ դրա հապավումը:

### Հոդված 6. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ (ԱՆԴԱՄՆԵՐԸ)

Արհեստակցական կազմակերպության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատողները, այդ

թվում՝ օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք:

Աշխատողը կարող է մասնակից (անդամ) լինել մեկից ավելի կազմակերպությունների, եթե դա չի հակասում նրանց կանոնադրություններին:

Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) լինելու կարգը սահմանվում է այդ կազմակերպության կանոնադրությամբ:

Արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողները:

Գործատուն չի կարող ընտրվել այն արհեստակցական կազմակերպության ղեկավար մարմինների կազմում, որին մասնակցում (անդամակցում) է տվյալ գործատուի աշխատողը:

## Հոդված 7. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ (ԱՆԴԱՄՆԵՐԸ)

Արհեստակցական կազմակերպությունների միության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել արհեստակցական կազմակերպություններն ու (կամ) արհեստակցական կազմակերպությունների միությունները:

Արհեստակցական կազմակերպությունն ու արհեստակցական կազմակերպությունների միությունը կարող են մասնակից (անդամ) լինել արհեստակցական կազմակերպությունների մեկ միության:

Արհեստակցական միությանը մասնակից (անդամ) լինելը կարգավորվում է նրա կանոնադրությամբ:

## Հոդված 8. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆԸ

Արհեստակցական միության բարձրագույն մարմինը նրա ժողովն է (համաժողովը, համագումարը), որը հրավիրվում է նրա կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ:

Արհեստակցական միության բարձրագույն մարմինն ունի նրա գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Նրա բացառիկ իրավասությունն է՝

ա) արհեստակցական միության կանոնադրության հաստատումը և փոփոխումը.

բ) արհեստակցական միության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը.

գ) արհեստակցական միության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը:

## Հոդված 9. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանոնադրությունը պետք է բովանդակի արհեստակցական միության՝

ա) անվանումը, որը պետք է ներառի համապատասխանաբար «արհեստակցական կազմակերպություն» կամ «արհեստակցական կազմակերպությունների միություն» բառերը.

բ) գործունեության առարկան և նպատակները.

գ) կառուցվածքը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման և գործունեության կարգը, նրանց գործառույթները.

դ) մասնակից (անդամ) դառնալու և մասնակցությունից (անդամակցությունից) դուրս գալու կարգը.

ե) մասնակիցների (անդամների) իրավունքներն ու պարտականությունները.

զ) գտնվելու վայրը (հասցեն).

է) վերակազմակերպման և լուծարման կարգը.

ը) կանոնադրությունում լրացումներ և փոփոխություններ կատարելու կարգը.

թ) մուտքի վճարների, անդամավճարների չափը, մուծումների կարգն ու գույքի ձեռքբերման այլ աղբյուրներ:

## Հոդված 10. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստակցական միության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից և դադարում է նրա լուծարման ավարտի մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառում կատարելու պահին:

Արհեստակցական միության գրանցումն ու գրանցման մերժումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

## Հոդված 11. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Արհեստակցական միության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է նրա բարձրագույն մարմնի որոշմամբ՝ օրենքով և նրա կանոնադրությամբ սահմանված կարգով:

Արհեստակցական միության վերակազմավորում չի թույլատրվում:

Արհեստակցական միության լուծարումը տեղի է ունենում օրենքով և արհեստակցական միության կանոնադրությամբ սահմանված կարգով ու դեպքերում:

# Գ Լ ՈՒ Խ 3

## *ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*

## Հոդված 12. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արհեստակցական միությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և արհեստակցական միության կանոնադրությանը համապատասխան:

## Հոդված 13. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստակցական միությունն անկախ է պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից, այլ կազմակերպություններից և կուսակցություններից, նրանց հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործատուներին, այլ կազմակերպություններին և ֆիզիկական անձանց արգելվում է խոչընդոտել կամ միջամտել արհեստակցական միության կանոնադրությամբ սահմանված իրավունքների իրականացմանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

## Հոդված 14. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆը

Արհեստակցական միությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու արհեստակցական միության կանոնադրությանը համապատասխան կարող է համագործակցել միջազգային և այլ երկրների արհեստակցական միությունների ու այլ հասարակական միավորումների հետ, ինչպես նաև մասնակցել (անդամակցել) միջազգային և այլ երկրների արհեստակցական միություններին:

# Գ Լ ՈՒ Խ 4

# *ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

## Հոդված 15. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Արհեստակցական միության նպատակներն են՝

ա) ներկայացնել և պաշտպանել արհեստակցական միության մասնակցի (անդամի) աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը և իրավունքները գործատուի և (կամ) երրորդ անձի մոտ.

բ) գործատուի հրավերով մասնակցել արտադրական ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը.

գ) գործատուին ներկայացնել առաջարկություններ՝ աշխատողների

աշխատանքի և հանգստի պայմանների բարելավման, նոր տեխնիկայի ներդրման, ձեռքի աշխատանքի թեթևացման, արտադրական նորմաների վերանայման, աշխատանքի վարձատրության չափի և կարգի վերաբերյալ.

դ) գործատուի հետ համագործակցել արհեստակցական միության մասնակցի (անդամի) պարգևատրման և խրախուսման հարցերում.

ե) գործատուի ներկայացմամբ քննարկել աշխատանքային կարգապահության խախտում թույլ տված արհեստակցական միության մասնակցի (անդամի) հարցը:

## Հոդված 16. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ) ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արհեստակցական միությունը, ի դեմս իր ղեկավար մարմնի կամ ներկայացուցչի, իրավունք ունի կոլեկտիվ պայմանագիր (համաձայնագիր) կնքել (վերակնքել) գործատուի հետ:

Գործատուն պարտավոր է իր աշխատողներին միավորող արհեստակցական միության հետ կնքել (վերակնքել) կոլեկտիվ պայմանագիր (համաձայնագիր):

Կոլեկտիվ պայմանագիրը (համաձայնագիրը) կնքվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կարող է բանակցել և համաձայնագիր կնքել արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միությունը, պետական կառավարման մյուս մարմինների հետ կարող են բանակցել և համաձայնագիր կնքել արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունները:

## Հոդված 17. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Արհեստակցական միության ղեկավար մարմնի ներկայացուցիչները, աշխատանքի պայմանների ուսումնասիրման նպատակով, իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այցելել այն աշխատատեղերը, որտեղ աշխատում են տվյալ արհեստակցական միության մասնակիցները (անդամները):

Աշխատատեղում, աշխատանքի պայմանների հետ կապված, աշխատողի կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրադրություն ի հայտ գալու դեպքում արհեստակցական միությունն իրավունք ունի գործատուից միջնորդագրով պահանջել միջոցներ ձեռնարկել ի հայտ եկած վտանգը վերացնելու կամ մինչ այդ աշխատանքն այդ աշխատատեղում դադարեցնելու համար: Միջնորդագրերին ի պատասխան՝ գործատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում արհեստակցական միությանը տեղյակ պահել

ձեռնարկված միջոցառումների մասին:

## Հոդված 18. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ և ՏԱՐԱԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արհեստակցական միությունն իր կանոնադրական խնդիրներն իրագործելու նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունի պետական մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, գործատուներից ստանալ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք չհամարվող տեղեկություններ:

Արհեստակցական միությունն իրավունք ունի իր գործունեությունը լուսաբանել զանգվածային լրատվության միջոցներով կամ այդ նպատակով, օրենքով սահմանված կարգով, ունենալ լրատվության միջոցներ:

## Հոդված 19. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արհեստակցական միությունը, արհեստակցական միության մասնակցի (անդամի) իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակով, իրավասու է միջնորդագրով դիմել պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, գործատուին կամ այլ անձանց, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը):

## Հոդված 20. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ և ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Արհեստակցական միությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր, գործադուլներ, զանգվածային այլ միջոցառումներ, դրանց հետ կապված բանակցություններ վարել պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործատուների, այլ կազմակերպությունների, նրանց պաշտոնատար անձանց հետ:

## Հոդված 21. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Արհեստակցական միությունը կարող է առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին՝ արհեստակցական միության մասնակիցների (անդամների) աշխատանքային և սոցիալական իրավունքների պաշտպանության

ուղղված իրավական նորմատիվ ակտեր ընդունելու, այդ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

Հոդված 22. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կոլեկտիվ կամ այլ պարտավորություններ չկատարելու, ինչպես նաև անօրինական գործադուլներ և այլ միջոցառումներ կազմակերպելու ու անցկացնելու համար արհեստակցական միությունը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 5

## *ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ*

Հոդված 23. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ և ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ (ԱՆԴԱՄՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, գործատուներն ու այլ կազմակերպությունները, նրանց պաշտոնատար անձինք, ինչպես նաև այլ անձինք պարտավոր են չխախտել արհեստակցական միության և նրա մասնակիցների (անդամների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքները:

Արհեստակցական միության, նրա ներկայացուցչի իրավունքները խախտելը կամ կազմակերպության կանոնադրական գործունեությանը խոչընդոտելը, արհեստակցական միության ղեկավարներին ու ներկայացուցիչներին հետապնդելն առաջ է բերում պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործատուի նախաձեռնությամբ, այդ թվում՝ նաև աշխատատեղերի կրճատման դեպքում աշխատողի աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու, ինչպես նաև աշխատողին այլ աշխատանքի փոխադրելու, նրան կարգապահական տույժի ենթարկելու հետ կապված հարաբերություններին, կոլեկտիվ և անհատական վեճերին արհեստակցական միության մասնակցությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Հոդված 24. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼԸ

Գործատուն, կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով) սահմանված կարգով, արհեստակցական միությանը տրամադրում է անհրաժեշտ

պայմաններ՝ արհեստակցական միության կանոնադրությամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման և կատարման համար:

Արհեստակցական կազմակերպության անդամի դիմումի առկայության դեպքում գործատուն կազմակերպում է արհմիութենական անդամավճարի գանձումը և հատկացումը՝ արհեստակցական կազմակերպության կանոնադրությամբ և կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով) սահմանված կարգով ու ժամկետում:

Հոդված 25. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԸՆՏՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հասարակական պարտականությունների կատարման, արհմիութենական միջոցառումներին մասնակցելու ժամանակահատվածում արհեստակցական միության ընտրովի մարմինների անդամների աշխատանքից բացակայության և այդ ընթացքում նրանց վարձատրության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գործատուի հետ կնքված կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով):

Արհեստակցական միության մարմիններում ընտրված անձանց համար կոլեկտիվ պայմանագրով (համաձայնագրով) կարող են նախատեսվել այլ երաշխիքներ:

Հոդված 26. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստակցական միության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով և արհեստակցական միության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Արհեստակցական միությունների կողմից սույն օրենքի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

## Գ Լ ՈՒ Խ 6

## *ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ*

Հոդված 27. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստակցական միության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Գործատուն, կոլեկտիվ պայմանագրին (համաձայնագրին) համապատասխան, արհեստակցական միությանը տրամադրում է

ֆինանսական միջոցներ և այլ գույք՝ աշխատողների աշխատանքի և հանգստի պայմանների բարելավմանը, ինչպես նաև նրանց առողջության պահպանմանը նպատակաուղղված միջոցառումներ կազմակերպելու համար:

Պետությունը երաշխավորում է արհեստակցական միությունների սեփականության իրավունքի անձեռնմխելիությունն ու պաշտպանությունը:

Հոդված 28. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Արհեստակցական միությունը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր սեփականությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և արհեստակցական միության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Արհեստակցական միությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում, հրապարակում է իր սեփականության օգտագործման տարեկան հաշվետվությունը:

## Գ Լ ՈՒ Խ 7

## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ*

Հոդված 29. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ — Ռ. Քոչարյան

Երևան
31 դեկտեմբերի 2000 թ.
ՀՕ-135